ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/177

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Մարինե-99» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047» ծածկագրով գնանշման հարցում, հեռախոսային սարքերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17092-2019 գրությամբ «Մարինե-99» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.10.2019թ. թիվ 1/18-2/63544-2019 գրության հիման վրա, 17.10.2019թ.-ին «Մարինե-99» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 17.10.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 24.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 24.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.10.2019թ.-ին:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 14.10.2019թ. թիվ 1/18-2/63544-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլը.

«Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մարինե-99» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև հեռախոսային սարքերի ձեռքբերման համար 2019 թվականի օգոստոսի 29-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 1 հավելվածի՝ «Մարինե-99» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2019 թվականի սեպտեմբերի 28-ը կատարեր ստանձնած պարտավորությունները՝ մատակարեր տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքը Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով:

Սույն թվականի սեպտեմբերի 3-ին «Մարինե-99» ՍՊԸ-ն մատակարարել էր ապրանքը, սակայն վերջինս չէր համապատասխանել Պայմանագրով սահմանված պայմաններին և չէր ընդունվել պատասխանատու ստորաբաժանման կողմից (կից

ներկայացվում է բացասական եզրակացությունը): ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ

/2-5/53909-2019 գրությամբ նախազգուշացվել էր «Մարինե-99» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս սահմանված ժամկետում կատարի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ մատակարարելով Պայմանագրի տեխնիկական բնութագրով ներկայացված ապրանքները:

Տեղեկացնում եմ, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքը Կազմակերպության կողմից չի մատակարարվել և խախտվել է Պայմանագրի էական պայմանները:

Հիմք ընդունելով Պայամանգրի 2.1.7 ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը:

Հաշվի առնելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հոկտեմբերի 11-ից միակողմանի լուծում է 2019 թվականի օգոստոսի 29-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մարինե-99» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Մարինե-99» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Մարինե-99» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17092-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը, ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Տվյալ պահին ես գտնվում եմ ՌԴ-ում Զինված Ուժերի ռազմական հոսպիտալում ЗПЯщик / որպես Ավղանստանի պատերազմի վետերան- հերթական զննման/, հետևաբար չեմ կարող ներկա լինել առաջին և հաջորդ նիստերին: ՍՊԸ-ում ես գրացված եմ մեկ անձ: Լիազոր ներկայացուցիչ չունեմ:

Ինչ վերաբերվում է հեռախոսներին: Քանի որ մրցույթին հայտարարված Panasonic մակնիշի հեռախոսի նախահաշվարկային գինը -15000 դրամ էր, /իրական արժեքը- 25000 դրամ է/, ես մասնակցեցի համարժեք մակնիշի հեռախոսով: Մինչ մրցույթը հարցում եմ արել չինացի արտադրողին, ներկայացնելով ՊԵԿ-ի տեխնիկական բնութագրի պատճեն: Ստանալով արտադրողի կողմից հեռախոսի լուսանկարը և համարժեքի տեխբնութագրերը, որոնք լիովին և մի քանի պարամետր ավել համապատասխանում էին ՊԵԿ-ի տեխբնութագրին ես մասնակցեցի մրցույթին և զբաղեցրեցի առաջին տեղ: Ապրանքը տվյալ ֆիրմայի ներկայացուցիչից ստանալուց և ՊԵԿ-ին մատակարարելուց մի քանի օր անց պարզվեց, որ տվյալ մոդելի ոչ բոլոր պարամետրերնեն համապատասխանում տեխբնութագրին: Հեռախոսները ՊԵԿ-ից հետ ստանալուց հետո դիմեցի չինական կողմին, որի պատասխաններ-/пожалуйста возвратите/ ինչը անհնար բան է: Ես չեմ պատկերացնում թե երբ և իչքան ժամանակում պետք է ռեալիզացնեմ 100 հատ հեռախոսները:

«Մարինե-99» ՍՊԸ-ն համար 5 և մինչև օրս պետական գնումներում գրանցված և գործող ընկերություններից է: Եթե հնարավոր է սահմանափակվել միայն տուգանքով և չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2019/177 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Մարինե-99» ՍՊԸ-ի միջև 29.08.2019թ.-ին կնքվել է թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքի՝ Հեռախոսային սարքերի հետևյալ բնութագիրը.

«Հաղորդալարային ստեղնային հեռախոս Panasonic KX-TS2382 կամ համարժեք:

Հեռախոսի նվազագույն պահանջներն են՝

- *զանգի լուսային ցուցիչ*
- *մեկ սեղմումով 20 համարի արագ հավաքման հնարավորություն*
- *10 հեռախոսահամարի արագ հավաքման հնարավորություն*
- *վերջին զանգի կրկնման հնարավորություն*
- *աշխատում է տոնային և պուլսային ռեժիմներով*
- *զանգի կարգավորման 4 ռեժիմ*
- *պատին ամրացվելու հնարավորություն*

Սույն ապրանքը պետք է ունենա առնվազն 1 տարի երաշխիքային ժամկետ:

Մատակարարվող ապրանքը պետք է ունենա գործարանային փաթեթավորում»:

Կողմերի միջև ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պայմանագրի մատակարարված ապրանքների ընդունման վերաբերյալ երկկողմնի կազմված և ստորագրված արձանագրության համաձայն՝ «Մարինե-99» ՍՊԸ-ի կողմից մատակարարված DIAMOND DM-502 մոդելի հեռախոսային սարքերի վերաբերյալ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

1. Պայմանագրով սահմանված տեխնիկական բևութագրում առկա՝ մեկ սեղմումով 20 համարի արագ հավաքման հնարավորության պահանջը, 10 հեռախոսահամարի արագ հավաքման հնարավորության պահանջը և զանգի կարգավորման 4 ռեժիմի պահանջը մատակարարված հեռախոսային սարքերը չեն կատարում:

2. «Մարինե-99» ՍՊԸ-ի կողմից երաշխիքային սպասարկման կտրոնում հասկանալի չէ, թե վերջինս, որ հեռախոսային սարքերի համար է տրված, քանի որ վերջինիս մեջ բացակայում են հեռախոսային սարքերի սերիական համարները: Ինչպես նաև վերոնշյալ կտրոնում առկա են երաշխիքի չգործելու վերաբերյալ կետեր, որոնք չեն

համապատասխանում ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պայմանագրի 4-րդ կետի 4.2 ենթակետի պահանջներին:

3. «Մարինե-99» ՍՊԸ-ի կողմից մատակարարված հեռախոսային սարքերի վրա բացակայում են վերջիններիս սերիական համարները, այսպիսով վերոնշյալ հեռախոսային սարքերը հնարավոր չէ նույնականացնել:

Պատվիրատուն գրությամբ դիմել է Մասնակցին և հայտնել, որ մատակարարված ապրանքը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին, որի հիմք է հանդիսանում պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված բացասական եզրակացությունը:

Միևնույն ժամանակ Մասնակցին առաջարկվել է, մինչև Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետի ավարտը, շտկել պատասխանատու ստորաբաժանման կողմից արձանագրված թերությունները և մատակարարել Պայմանագրով հաստատված ապրանքը, այլապես, Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի կլուծի կնքված Պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 14.10.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Մարինե-99» ՍՊԸ-ի միջև հեռախոսային սարքերի ձեռքբերման համար 2019 թվականի օգոստոսի 29-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 1 հավելվածի՝ «Մարինե-99» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2019 թվականի սեպտեմբերի 28-ը կատարեր ստանձնած պարտավորությունները՝ մատակարարեր տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքը Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով:

Սույն թվականի սեպտեմբերի 3-ին «Մարինե-99» ՍՊԸ-ն մատակարարել էր ապրանքը, սակայն վերջինս չէր համապատասխանել Պայմանագրով սահմանված պայմաններին և չէր ընդունվել պատասխանատու ստորաբաժանման կողմից (կից ներկայացվում է բացասական եզրակացությունը): ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ /2-5/53909-2019 գրությամբ նախազգուշացվել էր «Մարինե-99» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս սահմանված ժամկետում կատարի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ մատակարարելով Պայմանագրի տեխնիկական բնութագրով ներկայացված ապրանքները:

Տեղեկացրել են, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքը մասնակցի կողմից չի մատակարարվել և խախտվել է Պայմանագրի էական պայմանները:

Հիմք ընդունելով Պայամանգրի 2.1.7 ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Հաշվի առնելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հոկտեմբերի 11-ից միակողմանի լուծել է 2019 թվականի օգոստոսի 29-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17092-2019 գրությամբ «Մարինե-99» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն' պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ' պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով,

պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Մարինե-99» ՍՊԸ-ի միջև 29.08.2019թ.-ին կնքվել է թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքի՝ Հեռախոսային սարքերի հետևյալ բնութագիրը.

«Հաղորդալարային սպեղնային հեռախոս Panasonic KX-TS2382 կամ համարժեք:

Հեռախոսի նվազագույն պահանջներն են՝

- *զանգի լուսային ցուցիչ*
- *մեկ սեղմումով 20 համարի արագ հավաքման հնարավորություն*
- *10 հեռախոսահամարի արագ հավաքման հնարավորություն*
- *վերջին զանգի կրկնման հնարավորություն*
- *աշխատում է տոնային և պուլսային ռեժիմներով*
- *զանգի կարգավորման 4 ռեժիմ*
- *պատին ամրացվելու հնարավորություն*

Սույն ապրանքը պետք է ունենա առնվազն 1 տարի երաշխիքային ժամկետ:

Մատակարարվող ապրանքը պետք է ունենա գործարանային փաթեթավորում»:

Կողմերի միջև ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պայմանագրի մատակարարված ապրանքների ընդունման վերաբերյալ երկկողմնի կազմված և ստորագրված արձանագրության համաձայն՝ «Մարինե-99» ՍՊԸ-ի կողմից մատակարարված DIAMOND DM-502 մոդելի հեռախոսային սարքերի վերաբերյալ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

1. Պայմանագրով սահմանված տեխնիկական բևութագրում առկա՝ մեկ սեղմումով 20 համարի արագ հավաքման հնարավորության պահանջը, 10 հեռախոսահամարի արագ հավաքման հնարավորության պահանջը և զանգի կարգավորման 4 ռեժիմի պահանջը մատակարարված հեռախոսային սարքերը չեն կատարում:

2. «Մարինե-99» ՍՊՐ-ի կողմից երաշխիքային սպասարկման կտրոնում հասկանալի չէ, թե վերջինս, որ հեռախոսային սարքերի համար է տրված, քանի որ վերջինիս մեջ բացակայում են հեռախոսային սարքերի սերիական համարները: Ինչպես նաև վերոնշյալ կտրոնում առկա են երաշխիքի չգործելու վերաբերյալ կետեր, որոնք չեն համապատասխանում ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պայմանագրի 4-րդ կետի 4.2 ենթակետի պահանջներին:

3. «Մարինե-99» ՍՊԸ-ի կողմից մատակարարված հեռախոսային սարքերի վրա բացակայում են վերջիններիս սերիական համարները, այսպիսով վերոնշյալ հեռախոսային սարքերը հնարավոր չէ նույնականացնել:

Պատվիրատուն գրությամբ դիմել է Մասնակցին և հայտնել, որ մատակարարված ապրանքը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին, որի հիմք է հանդիսանում պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված բացասական եզրակացությունը:

Միևնույն ժամանակ Մասնակցին առաջարկվել է, մինչև Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետի ավարտը, շտկել պատասխանատու ստորաբաժանման կողմից արձանագրված թերությունները և մատակարարել Պայմանագրով հաստատված ապրանքը, այլապես, Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի կլուծի կնքված Պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 14.10.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Մարինե-99» ՍՊԸ-ի միջև հեռախոսային սարքերի ձեռքբերման համար 2019 թվականի օգոստոսի 29-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ «Մարինե-99» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2019 թվականի սեպտեմբերի 28-ը կատարեր ստանձնած պարտավորությունները՝ մատակարարեր տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքը Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով:

Սույն թվականի սեպտեմբերի 3-ին «Մարինե-99» ՍՊԸ-ն մատակարարել էր ապրանքը, սակայն վերջինս չէր համապատասխանել Պայմանագրով սահմանված պայմաններին և չէր ընդունվել պատասխանատու ստորաբաժանման կողմից (կից ներկայացվում է բացասական եզրակացությունը): ՀՀ պետական եկամուտների կոմիտեի

2019 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ /2-5/53909-2019 գրությամբ նախազգուշացվել էր «Մարինե-99» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս սահմանված ժամկետում կատարի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ մատակարարելով Պայմանագրի տեխնիկական բնութագրով ներկայացված ապրանքները:

Հաշվի առնելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հոկտեմբերի 11-ից միակողմանի լուծել է 2019 թվականի օգոստոսի 29-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պայմանագիրը:

Սույն գործի փաստերի համաձայն, հիմք ընդունելով Կողմերի միջև ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047 ծածկագրով պայմանագրի մատակարարված ապրանքների ընդունման վերաբերյալ երկկողմնի կազմված և ստորագրված արձանագրությունը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մատակարարված ապրանքները չեն համապատասխանել թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/047» ծածկագրով գնման Պայմանագրի Տեխնիկական բնութագրին, մասնակիցը չի շտկել պատասխանատու ստորաբաժանման կողմից արձանագրված թերությունները և չի մատակարարել Պայմանագրի Տեխնիկական բնութագրին հմապատասխան ապրանքը, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Մասնակցի կողմից սույն ընթացակարգի քննության ընթացքում չներկայացվեց, որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ չինական կողմի մեղքով է տեղի ունեցել տեխնիկական բնութագրին անհապատասխան ապրանքներ մատակարարելու խնդիրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Մարինե-99» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, 11.10.2019թ.-ին միակողմանիորեն լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 14.10.2019թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մարինե-99» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17092-2019 գրությամբ «Մարինե-99» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/177 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մարինե-99» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**